ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԱՄԱԿԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս:

Ձեր ուղերձը այն մասին, որ այս տարվա ապրիլի 24-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և ողջ հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, պիտի ոգեկոչեն հիշատակը նրանց, որոնք 70 տարի առաջ ցեղասպանության վոհ դարձան Արևմտյան Հայաստանում, վշտագին հիշողություններ արթնացրեց մեր մեջ՝ այդ ողբերգական իրադարձության մասին, և մեկ մղեց սրտաբուխ աղոթքի՝ կործանված բյուրավոր անմեղ կյանքերի համար: Սա մի ծայրագույն փորձություն էր, որ բաժին ընկավ բազմաչարչար հայ ժողովրդին:

Բոլոր հայերի համար անմոռանալի այդ օրը մենք մեր աղոթքները կմիացնենք Ձեր Եկեղեցու և բոլոր հայ մարտիրոսների աղոթքներին, մարտիրոսներ, որոնք նահատակվեցին այդ տխուր օրերին: Թող բարերար Աստված հանգիստ տա 70 տարի առաջ տառապած բոլոր անմեղ հոգիներին: Հավերժ հիշատակ նրանց:

Թող 1915 թ. եղեռնի վոհերի հիշատակը վճռականություն տա մեզ՝ չարի դեմ պայքարում: Ձերդ Սրբություն, համաձայն ենք Ձեր առաջարկին՝ այդ օրը աղոթելու նաև ամբողջ աշխարհի խաղաղության համար, որպեսզի երբեք և ոչ մի տեղ չկրկնվեն նման ողբերգությունները, որպեսզի մեր տագնապալի դարում մարդը ընտրի ողջմտության ուղին:

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Շուտով մենք համատեղ աղոթքի ևս մի առիթ պիտի ունենանք այն կոհերի համար, որ մեր ժողովուրդները ունեցան 1941—45 թթ. Հայրենական մեծ պատերազմում: Հաղթանակի ուրախությունը, որի քառասնամյակն է տոնում մեր երկիրն ու ամբողջ առաջադեմ մարդկությունը, զուգակցվում է կրած կորստի և վշտի զգացման հետ, և նրանց հիշատակը երբեք չի մարի մարդկանց սրտերում: Մենք պարտական ենք նրանց առաջ, ովքեր իրենց կյանքը հատուցեցին մեր կյանքի համար:

Ձերդ սիրեցյալ Սրբություն,

Մաղթում ենք, որ Դուք ամուր առողջությամբ և Աստուծո ամենակոր օգնությամբ հաջողապես իրագործեք Ձեր քահանայապետական ծառայությունը՝ հուրախություն Հայոց Սուրբ Եկեղեցու բոլոր հավատարիմ զավակների:

Ձեր նկատմամբ մեծ հարգանքով և ի Քրիստոս անդավաճան սիրով՝

ՊԻՄԵՆ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

№ 1001
10 ապրիլ, 1985 թ.
Ք. Մոսկվա